

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները.....	10
5.2. Բյուջեի ծախսերը.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ.....	14
6.2. Ավանդներ.....	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Հակառակ տարեսկզբի սպասումներին գլոբալ անկայուն իրավիճակի և դժվար կանխատեսելի աշխարհաքաղաքական իրադարձությունների դրական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա գերազանցել է դրանցով պայմանավորված բացասական ազդեցությանը, ինչի հաշվին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) վերջին ամիսներին գրանցում է տպավորիչ աճ: Բացառություն չէ նաև հուլիս ամիսը: Այսպես, 2021 թվականի հուլիսի նկատմամբ 2022 թվականի հուլիսի ՏԱՑ-ը կազմել է 19.4%՝ հունիս ամսվա նույն ցուցանիշի համեմատ արագանալով 1.1 տոկոսային կետով: 2022 թվականի հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ը կազմել է 13.1%, ինչը նախորդ ամսվա նույն ցուցանիշը գերազանցում է 1.3 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային¹, %



ՏԱՑ-ի աճը 2022թ. հունվար-հուլիս ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով: Դրանց նպաստումները ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 5.7 և 4.7 տոկոսային կետ: 0.3 տոկոսային կետով ավելացել է նաև արդյունաբերության նպաստումը և կազմել 1.8 տոկոսային կետ:

¹ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է նախորդ ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշները, ինչի արդյունքում «2022թ. հունիսը 2021թ. հունիսի նկատմամբ» ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով:


Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-հուլիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Արդյունաբերության ոլորտում աճի տեմպը դանդաղել է: Արդյունաբերության ոլորտի՝ 2021թ. հուլիսի նկատմամբ 2022թ. հուլիսի աճի տեմպը նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատ նվազել է 5.3 տոկոսային կետով և կազմել 13.7%: Սակայն, կուտակային՝ տարեսկզբից մինչև հուլիս ժամանակահատվածի աճի տեմպն ավելացել է (1.2 տոկոսային կետով) և կազմել 7.0%:

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության աճը 2022թ. հունվար-հունիս ամիսներին² պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 15.1% աճով: Այն արդյունաբերության ընդհանուր աճին նպաստել է 8.4 տոկոսային կետով: Հանքարդյունաբերության ոլորտում, չնայած մայիսի համեմատ հունիսին արձանագրված 6.6% աճին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 2022 թվականի կուտակային աճի առումով շարունակվում է անկում արձանագրվել (հունվար-հունիսի կուտակային անկումը՝ 10.3%), ինչն արդյունաբերության ընդհանուր աճին հակազդել է 3.0 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել են նաև «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» (ավելի քան 0.1 տոկոսային կետով) և «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղերի աճը (շուրջ 0.1 տոկոսային կետով):

1.2. Շինարարություն

Շինարարության աճն այս տարվա հուլիսին կազմել է 16.8%՝ հունիսի համեմատ արագանալով ընդամենը 0.1 տոկոսային կետով: Շինարարության հունվար-հուլիս ամիսների կուտակային աճի տեմպը շարունակել է արագանալ՝ կազմելով 13.6%:

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




² 2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Ռուս-ուկրաինական զինված հակամարտության պատճառով ՌԴ քաղաքացիների ներհոսքը Հայաստան շարունակում է էական դրական ազդեցություն ունենալ ծառայությունների ոլորտի վրա: 2021 թվականի հուլիսի համեմատ 2022 թվականի հուլիսին ծառայությունների աճի տեմպը դանդաղել է 4.9 տոկոսային կետով՝ կազմելով 30.6%: Չնայած դրան, 2021 թվականի հունվար-հուլիս ամիսների նկատմամբ 2022 թվականի նույն ցուցանիշը շարունակել է աճել (0.6 տոկոսային կետով)՝ կազմելով 27.5%:

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




2022թ. հունվար-հունիս ամիսներին³ ծառայությունների աճը մեծապես պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերում արձանագրված աճերով (դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.7, 4.6 և 4.5 տոկոսային կետ):

1.4. Առևտուր

Առևտրի ոլորտի աճի տեմպը ևս ՌԴ քաղաքացիների ներհոսքով պայմանավորված արագացել է: 2022թ. հուլիսին առևտրի շրջանառության աճը նախորդ ամսվա համեմատ արագացել է 3.1 տոկոսային կետով և կազմել 21.3%: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հունվար-հուլիս ամիսների առևտրի աճի տեմպը ևս արագացել է (1.8 տոկոսային կետով)՝ կազմելով 12.5%:

³ 2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ապրանքների արտահանման ծավալը շարունակել է աճել: Այսպես, 2022թ. հուլիսին 2021 թվականի հուլիսի նկատմամբ արտահանման աճը կազմել է 82.2%՝ հունիսի համեմատ արագանալով 12.8 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվար-հուլիսի կուտակային աճը 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 43.9%: Արտահանման ծավալների այդպիսի աճի պատճառի առաջին խելամիտ բացատրությունը թերևս այն է, որ դրա աճի տեմպի արագացումը կարող է պայմանավորված լինել վերաարտահանման երևույթով: Ամենայն հավանականությամբ դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ ներմուծումը ևս վերջին ամիսներին զգալիորեն աճել է:

2022թ. հունվար-հունիս ամիսներին⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի համապատասխանաբար 120.0%, 36.0% և 46.6% աճերով, որոնց նպաստումները կազմել են 11.9, 6.7 և 5.4 տոկոսային կետ:

⁴ 2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁵, %




Ներմուծման հունվար-հուլիս ամիսների աճի տեմպը նույնպես արագացել է՝ հասնելով 50.1%-ի՝ նախորդ ամսվա 48.7%-ի դիմաց:

Հունվար-հունիս ամիսների տվյալներով⁶ ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը: Դրանցից առավել նշանակալի է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «հանքահումքային արտադրանք» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ներմուծմանը նպաստել են համապատասխանաբար 9.3, 6.7 և 4.7 տոկոսային կետով:

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում «2022թ. մայիսը 2021թ. մայիսի նկատմամբ» ցուցանիշը բարելավվել է 0.4 տոկոսային կետով, իսկ «2022թ. հունիսը 2021թ. հունիսի նկատմամբ» ցուցանիշը՝ 1.3 տոկոսային կետով:

⁶ 2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁷, %



3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


2022թ. հունվար-հունիսին անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակել է բարձր մնալ, սակայն ընդգծված գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը մնացել է ցածր մակարդակում։ ՀՀ տնտեսությունում միջին ամսական անվանական աշխատավարձը հունվար-հունիս ամիսներին⁸ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.3%-ով և կազմել 218,641.0 դրամ։ Պետական հատվածում միջին աշխատավարձն աճելով 4.5%-ով՝ կազմել է 175,920.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում այն աճել է 13.2%-ով և կազմել 237,705.0 դրամ (Գծապատկեր 9)։

Իրականում, հաշվի առնելով, որ 2022թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը 8.1% է, կարող ենք ընդգծել, որ իրական աշխատավարձն աճել է ընդամենը 3.0 տոկոսով։ Ինչ վերաբերում է պետական հատվածին, այդտեղ իրական աշխատավարձը բավական նվազել է, ինչը միանշանակ վկայում է այդ հատվածի աշխատողների միջին կենսամակարդակի անկման մասին։

⁷ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսներին հրապարակված ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. մայիս ամսվա ցուցանիշը նվազել է 0.8 տոկոսային կետով, իսկ հունիս ամսվանը՝ 1.4 տոկոսային կետով։

⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը։ Հետևաբար, հուլիսի տվյալները դեռևս չեն հրապարակվել։

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-հունիսին, %




4. ՓՈԽԱՐԺԵՔ⁹

ՀՀ դրամը շարունակում է արժևորվել: 2022թ. հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամը միջին հաշվով արժևորվել է 12.5%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 24.5%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ևս դրամը հուլիս ամսին արժևորվել է (հունիսի համեմատ՝ 6.3%-ով): Այնուամենայնիվ, հունվար-հուլիսին ռուբլու նկատմամբ արժևորման տեմպը դանդաղել է (հունվար-հունիսի համեմատ նվազել է 2.6 տոկոսային կետով) և կազմել 8.2%:


Դրամի արժևորումը, բացի այն, որ խոչընդոտում է արտահանմանը, էական խնդիրներ է առաջացնում նաև ներքին սպառման համար նախատեսված ապրանքների և ծառայությունների մասով, քանի որ դրանց արտադրողների համար դժվարանում է ներմուծվող համարժեք ապրանքների հետ մրցակցելը:

⁹ Տվյալները վերցված են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքից՝ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/8.%20Exchange%20rates.xls (այցելվել է 26.08.2022թ.)

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2022թ. ընթացքում




5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ¹⁰

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները շարունակում են աճել: Դրանք 2022թ. հունվար-հուլիսին նախորդ ամսվա 24.3%-ի փոխարեն աճել են 25.7%-ով: Հարկային եկամուտների աճը կազմել է 24.6%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.9 տոկոսային կետով): 2022թ. հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեի ոչ հարկային եկամուտներն աճել են 37.0%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 2.44 անգամ:

¹⁰ Պետական բյուջեի ցուցանիշների փոփոխությունները հաշվարկվել են դրանց «հազար դրամներով» արտահայտված արժեքների կիրառմամբ, սակայն գծապատկերներում դրանք նշված են «մլրդ դրամներով», ինչի պատճառով (կլորացման հաշվին) ցուցանիշները որոշ մասերում աննշան չափով տարբերվում են:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճին առավել չափով նպաստել են ավելացված արժեքի հարկը (նպաստումը՝ 6.4 տոկոսային կետ, աճը՝ 19.6%), շահութահարկը (նպաստումը՝ 6.3 տոկոսային կետ, աճը՝ 48.5%) և պետական տուրքերը (նպաստումը՝ 5.6 տոկոսային կետ, աճը՝ ավելի քան 3.4 անգամ):


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-հուլիս		2022թ. հունվար-հուլիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	10.5	10.5	24.6	24.6
ԱԱՀ	11.9	3.8	19.6	6.4
Շահութահարկ	10.6	1.4	48.5	6.3
Եկամտային հարկ	2.7	0.8	7.0	2.0
Ակցիզային հարկ	-13.5	-1.1	15.2	0.9
Շրջանառության հարկ	13.0	0.3	28.2	0.7
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	16.2	0.6	61.7	2.5
Մաքսատուրք	40.8	1.8	-34.8	-2.0
Սոցիալական վճար	94.9	1.5	45.2	1.3
Այլ հարկային եկամուտներ	77.2	1.4	13.8	0.4
Պետական տուրք	14.5	0.3	243.1	5.6

5.2. Բյուջեի ծախսերը

Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է զգալիորեն զիջել եկամուտների աճին: ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2022թ. հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 4.1%-ով կամ 43.3 մլրդ դրամով, որից 18.1 մլրդ դրամը (1.7 տոկոսային կետ) կազմում է ընթացիկ, իսկ 25.1 մլրդ դրամը¹¹ (1.7 տոկոսային կետ)՝ կապիտալ ծախսերի աճը:

Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ճշտված պլանը 2022թ. առաջին ինն ամիսների համար կազմում է 293.4 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարման ներկայիս տեմպերի պահպանման դեպքում պլանը կթերակատարվի:

¹¹ Կլորացման պատճառով ընթացիկ և կապիտալ ծախսերի հանրագումարի և ընդհանուր ծախսերի արժեքի միջև առկա է փոքր շեղում:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ




Տարեսկզբից պետական բյուջեն հավելուրդային է: 2022 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 62 մլրդ դրամ հավելուրդով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 131.5 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Այս իմաստով, պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատ 2022 թվականի բյուջեն, լինելով հավելուրդային, տնտեսական ակտիվության վրա էական զսպող ազդեցություն է ունենում:

5.4. Պետական պարտք

ՀՀ պետական պարտքը 2022թ. հուլիսի վերջի դրությամբ կազմել է 9,974.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հուլիսի համեմատ աճելով շուրջ 11.2%-ով: Կառավարության պարտքը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 10.8%-ով՝ կազմելով 9,427.1 մլն ԱՄՆ դոլար: Կառավարության պարտքի աճը հիմնականում պայմանավորված է ներքին պարտքի 55.7% աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 5.8%-ով:

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գնաճի տեմպը որոշակիորեն դանդաղել է, սակայն շարունակում է մնալ բարձր: Հուլիսին սպառողական գների ինդեքսը կազմել է 9.3%, որը հունիսի ցուցանիշից ցածր է 1.0 տոկոսային կետով: Ընդ որում, նախորդ ամիսներին գնաճը բարձր տեմպերով էր արագացել և հունիսին ունեցել էր երկնիշ արժեք:


Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



6.2. Ավանդներ


Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալը 2022թ. հուլիսին աճել է: 2022թ. հուլիսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 9.7%-ով՝ ավելանալով 1.7 տոկոսային կետով: Ընդ որում, աճել է ինչպես ռեզիդենտների (11.7%-ով), այնպես էլ ոչ ռեզիդենտների (3.5%-ով) ավանդների ծավալը:

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



Տնային տնտեսությունների ավանդների 11.8% աճն ունեցել է շուրջ 5.4 տոկոսային կետով դրական նպաստում ավանդների աճին, իսկ ձեռնարկությունների ավանդների 14.2% աճի տեմպը ավանդների աճին նպաստել է 2.8 տոկոսային կետով:


Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ¹²



6.3. Վարկեր

2022թ. հուլիսին վարկերի ծավալն աճել է: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը (դրամային և արտարժույթային վարկերը միասին) 2022 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 3.1%-ով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19-ից երևում է, որ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են շուրջ 0.9%-ով՝ վարկերի ընդհանուր աճի վրա ունենալով 0.1

¹² Կլորացման պատճառով նպաստումների հանրագումարի և աճի արժեքի միջև առկա են փոքր շեղումներ:


տոկոսային կետով բացասական նպաստում, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են 3.3%-ով՝ վարկերի ընդհանուր աճի վրա ունենալով 3.1 տոկոսային կետով դրական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալը հիմնականում աճել է տնային տնտեսությունների վարկերի 10.6% աճի արդյունքում, մինչդեռ իրավաբանական անձանց վարկերի ծավալը զիջում է (2.7%-ով) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին¹³, տոկոսային կետ




¹³ Կլորացման պատճառով նպաստումների հանրագումարի և աճի արժեքների միջև առկա են փոքր շեղումներ:

Վարկերի ճյուղային կառուցվածքի¹⁴ վերլուծությունը ցույց է տալիս, որ վարկերի աճին առավել մեծ դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը (4.8 տոկոսային կետ): Գյուղատնտեսության ոլորտի վարկերի աճը հուլիսին կազմել է 17.4% և ընդհանուր վարկերի աճին նպաստել է 0.9 տոկոսային կետով: Շինարարության ոլորտին տրամադրվող վարկերը ևս աճել են և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 0.7 տոկոսային կետով:

6.4. Դրամական փոխանցումներ

Արտերկրից դեպի ՀՀ դրամական փոխանցումների ծավալները վերջին ամիսներին կտրուկ աճել են: Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների¹⁵ 2022թ. հունիսին¹⁶ բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 366.5 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը գերազանցում է ավելի քան 3.6 անգամ: 2022 թվականի առաջին վեց ամիսներին դեպի ՀՀ դրամական փոխանցումների ծավալը շուրջ 2.6 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հատկապես զգալի է ՌԴ-ից կատարվող փոխանցումների աճը՝ ավելի քան 4.9 անգամ:

Գծապատկեր 22. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹⁷



¹⁴ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

¹⁵ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝

https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/5.%20Money%20transfers%20of%20individuals.xls (այցելվել է 26.08.2022թ.)

¹⁶ Հուլիսի տվյալները ՀՀ կենտրոնական բանկը դեռևս չի հրապարակել:

¹⁷ Ներկայացված է բանկային համակարգով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և նրանց կողմից արտերկրի կատարված ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ուկրաինայում ռազմական գործողությունները և դրանց արդյունքում ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, չնայած կանխատեսումներին, ՀՀ տնտեսության վրա ունենում են դրական ազդեցություն: Դրա պատճառը ՌԴ-ից տնտեսական շուկերի դեպի ՀՀ փոխանցման ուղիների դրական զարգացումներն են: Մասնավորապես՝ ՌԴ-ից Հայաստան ներհոսող կապիտալը և աշխատուժը, ՀՀ արտադրանքի՝ ՌԴ արտահանման ծավալները, դրամական փոխանցումները էականորեն աճում են՝ ՀՀ տնտեսությունում ստեղծելով դրական զարգացումներ: Սակայն, դրական զարգացումներին զուգահեռ, առկա են նաև բացասական դրսևորումներ՝ փոխարժեքի կտրուկ արժևորման և գնաճի արագացման տեսքով: Փոխարժեքի արժևորումը կարող է հանգեցնել ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի մրցունակության նվազմանը, իսկ գնաճը ստեղծում է սոցիալական խնդիրներ: Վերջիններս, ի տարբերություն դրական զարգացումների, կարող են երկարաժամկետ բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսական զարգացման տեսանկյունից:

2. Գնաճը շարունակում է մնալ սոցիալ-տնտեսական լրջագույն խնդիր: Զիշտ է, 2021 թվականի հուլիսի նկատմամբ 2022 թվականի հուլիսի սպառողական գների ինդեքսի աճի տեմպը մի փոքր նվազել է նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատ, այնուամենայնիվ, շարունակում է մնալ բարձր մակարդակով: Բարձր գնաճի պայմաններում էապես դանդաղում է բնակչության իրական եկամուտների աճը, իսկ պետական հատվածում իրական եկամուտները նույնիսկ նվազում են:

3. ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի շարունակվող արժևորումը խիստ մտահոգիչ է: Դրամի արժևորումը, բացի այն, որ խոչընդոտում է արտահանմանը, էական խնդիրներ է առաջացնում նաև ներքին սպառման համար նախատեսված ապրանքների և ծառայությունների մասով, քանի որ դրանց արտադրողների համար դժվարանում է ներմուծվող համարժեք ապրանքների մասով մրցակցելը: Դրամի արժևորումը, այս իմաստով, միջնաժամկետում միանշանակ էական վնասներ կհասցնի տնտեսությանը:

Բնական է, որ գնաճի զսպումը և փոխարժեքի կայունության ապահովումն այս իրավիճակում պետության համար երկու հակադիր թիրախներ են: ՀՀ կենտրոնական բանկը միանշանակ նախապատվությունը տվել է առաջին թիրախի ապահովմանը: Թերևս դա է վկայում նաև այն, որ ՀՀ ԿԲ ս. թ. օգոստոսի 2-ի նիստում որոշվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնել ևս 0.25

տոկոսային կետով՝ այն սահմանելով 9.5%: Այս հանգամանքը կարող է ավելի ուժեղացնել դրամի արժևորման միտումները, եթե զուգահեռաբար չիրականացվեն այնպիսի արդյունավետ միջոցառումներ, որոնք մի կողմից՝ կկանխեն դրամի արժևորումը, մյուս կողմից՝ վերահսկելի միջակայքում կպահեն գնաճը:

4. Շարունակվում է դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների ծավալների էական աճ գրանցվել, ինչը նույնպես անվանական փոխարժեքի արժևորման էական գործոններից է: Նշենք, որ փոխանցումների այդպիսի աճն աննախադեպ է՝ փոխանցումների ծավալի ցուցանիշները մի քանի անգամ գերազանցում են նախորդ տարիների ցուցանիշները: Հատկապես կտրուկ աճել են ՌԴ-ից դրամական փոխանցումները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: